Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Լուսաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Ռուսաց լեզու (13 դասաժամ), ՆԶՊ (2 դասաժամ), ֆիզկուլտուրա (6 դասաժամ), Աշխարհագրություն (4դասաժամ), Իմ հայրենիքը, Իմ հայրենիքն ու աշխարհը (2 դասաժամ), Պատմություն (7 դասաժամ), հասարակագիտություն (2 դասաժամ) Հայոց եկեղեցու պատմություն (1 դասաժամ), կերպարվեստ (1 դասաժամ),Ազգային երգ պար (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ փետրվարի 28-ից մինչև 2023թ մարտի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 17-ին՝ ժամը 14:00-ին**, Տավուշի մարզի Լուսաձորի հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ գյուղ Լուսաձոր փողոց 7 շենք 9: Տեղեկությունների համար զանգահարել 094522707 հեռախոսահամարով: